ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 377-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով և հաշվի առնելով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել Ռուբեն Բալայանին սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 15-րդ փող., թիվ 31 հասցեում 05-074-0021-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրի հասարակական կառուցապատման նշանակության հողամասի սահմանների գծային չափերը պահպանելով 0.3 հա մակերեսը,հիմք ընդունել որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 15-րդ փող, թիվ 31 հասցեում գտնվող բնակավայրի հասարակական կառուցապատման նշանակության հողատարածքի սահմանների, գծային չափերի փոփոխությունը ճանաչել օրինական:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի կողմից 26.05.2025թ. տրված 366-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

2025 թ. հունիսի 02
ք.Ճամբարակ